ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՈՒՄ՝ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3-4 էջ
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5-6 էջ
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 7-8 էջ
4. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9-12 էջ
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 13-49 էջ
6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՈՒՆՆԵՐ 49-50 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 14-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 3-ի թիվ 63 որոշման Հավելվածի N 9-ը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի թիվ 83-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հունիսի 30-ի թիվ 103-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 138-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 60-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի մարտի 30-ի թիվ 47-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 86-Ա/1 հրաման:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի փետրվարի 10-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2.ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև՝ 2020 թվականի հունիսի 26-ին կնքվել էր թիվ ԴՏՊ-Ծ1032.Մ11012/20 ծածկագրով դրամաշնորհի պայմանագիր, 156,422.0 հազ. դրամ պայմանագրային գնով: Պայմանագրի առարկա է հանդիսանում՝ Կազմակերպության Աղավնաձորի մասնաճյուղում իրականացնել շուրջօրյա խնամվող տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման և այլ միջոցառումների իրականացման շրջանակներում ծառայությունների տրամադրման ապահովում: Հարկ է նշել, որ վերը նշված փոփոխուն և հաստատուն ծախսերի ցուցանիշները կնքված Համաձայնագրերի արդյունքում փոփոխվել էին: ՈՒսումնասիրվող ժամանակաշրջանում Պայմանագրում կատարվել էր թվով 5 փոփոխություն, որի արդյունքում կնքվել էին N 1-ից - N 5 Համաձայնագրերը, արդյունքում պայմանագրային գինը նվազելով կազմել է 54,844.3 հազ. դրամ:

Ստորև բերվում է հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների ամենաէական փաստերն ու դրանց ամփոփ նկարագրությունը՝

- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.2 կետի և Պայմանագրի 3-րդ «Մոնիթորինգ» գլխի մասերով՝ Նախարարությունը սահմանված կարգով մոնիթորինգ չի իրականացրել:
- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» 9)-րդ կետի պահանջի մասով, համաձայն որի «9) սննդի տրամադրում՝ օրական առնվազն երեք անգամ ...», Կազմակերպությունում բացակայում է սննդի տրամադրման՝ օրական առնվազն երեք անգամ, փաստը հավաստող փաստաթղթեր:
- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Միջոցառումների նկարագիր» Հավելված N 1-ով սահմանված գործառույթների մասով: Պայմանագրում նախատեսված 29 հաստիքային միավորները, հետագայում Համաձայնագրի փոփոխության միջոցով հանվել է, առանց հիմնավորման:
- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 5.2.1 կետի պահանջի հետ, արդյունքում հունիս ամսին Նախարարությունը **239.4** հազ. դրամով ավելի գումար է փոխհատուցել Կազմակերպությանը**:**
- Առկա է անհամապատասխանություն՝ Պայմանագրի Հավելված 3-ի «Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ» Հաշվետվության ցուցանիշների հետ: Հաշվեքննությամբ արձանագրվեց, որ Նախարարությանը ներկայացված 2020 թվականի հունիս ամսվա 1170 մարդ/օրը, փաստացի կազմել է 437 մարդ/օր:

- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի «Կազմակերպության փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ» Հավելված 4-ի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 426700 ծածկագրով փոխհատուցման համար նախատեսված գումարի մասով: Այսպես, Նախարարությանը ներկայացված **4,685.4** հազ. դրամ գումարի հաշվեքննությամբ արձանագրվեց, որ փաստացի ծախսը կազմել է **1,660.6** հազ. դրամ, այսինքն **3,024.4** հազ. դրամի չհիմնավորված սննդի գումար է փոխհատուցվել:
- Առկա է անհամապատասխանություն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ և 84.1-րդ հոդվածներով սահմանված կետերի պահանջների մասով: Հունիս ամսվա պայմանագրերում բացակայում է գործատուի ստորագրությունը: Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի համաձայնեցված կամքի արտահայտությունը: «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:» ՀՀ աշխատանքային օրենսգիրք Գլուխ 2, հոդված 14-րդ, հետևաբար այդ պայմանագրերի շրջանակներում փոխանցված **8,167.5** հազ. դրամի գումարները իրավական տեսանկյունից հիմնավորված չեն: Միաժամանակ հարկ է նշել նաև, որ բացառությամբ մի քանի դեպքերի՝ աշխատանքային պայմանագրերը կնքելիս չի պահպանվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետով սահմանված պահանջը՝ պայմանագրերում չեն նշվել պաշտոնները:
- Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Ի-ին գլխի «Պայմանագրի առարկան» պահանջների մասով: Այսպես, 2020 թվականի հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատանքի ընդունված 19 աշխատակիցներ Ծրագրի շրջանակներում տվյալ ժամանակահատվածում գործառույթներ չունեին, և այդ ժամանակահատվածի համար Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել էր **1,598.2** հազ. դրամ:

3.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշների շրջանակներում, ստորև բերվում է Համաձայնագիր N 5-ով՝ «Ցուցանիշների» Հավելված 2-ով հաստատված քանակագումարային ցուցանիշները:

	Ցուցանիշներ	Չափի միավոր
1. Շահառուների միջին ամսական թվաքանակը՝	39	շահառու
2. Մարդ/օրերի տարեկան քանակը	2379	մ/օր
3. Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա գինը փոփոխուն ծախսերիգծով	4100	դրամ
4. Փոփոխուն ծախսեր	9,753.9	հազ. դրամ
5. Հաստատուն ծախսեր	45,090.4	հազ. դրամ
6. Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	54,844.3	հազ. դրամ

այդ թվում՝

<u>Խնամքի իրականացման գծով.</u>

ա/ ըստ ամիսների մարդ/օր

Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)	Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)
Հունվար	0	Հուլիս	1209
Փետրվար	0	Օգոստոս	0
Մարտ	0	Սեպտեմբեր	0
Ապրիլ	0	Հոկտեմբեր	0
Մայիս	0	Նոյեմբեր	0
Հունիս	1170	Դեկտեմբեր	0
ԸՆԴԱՄԵՆԸ			**2379**

բ/ փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
Հունվար	0.0	Հուլիս	9,753.9
Փետրվար	0.0	Օգոստոս	9,753.9
Մարտ	0.0	Սեպտեմբեր	9,753.9
Ապրիլ	0.0	Հոկտեմբեր	9,753.9
Մայիս	0.0	Նոյեմբեր	9,753.9
Հունիս	4,797.0	Դեկտեմբեր	9,753.9
ԸՆԴԱՄԵՆԸ			**9,753.9**

Ապրանքի անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթեթիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Սննդամթերք	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	9,753.9

Ընդամենը	**X**	**X**	**9,753.9**

Հաստատուն ծախսերի գծով

ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	**Ծածկագիրը**	**Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)**
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	44,220.4
Այլ ծախսեր	480000	870.0
Ընդամենը	**X**	**45,090.4**

բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի

Ամիսները	**Ընդամենը (հազ.դրամ)**	**Ամիսները**	**Ընդամենը (հազ.դրամ)**
Հունվար	0.0	Հուլիս	21,866.6
Փետրվար	0.0	Օգոստոս	42,376.6
Մարտ	0.0	Սեպտեմբեր	42,376.6
Ապրիլ	0.0	Հոկտեմբեր	45,090.4
Մայիս	0.0	Նոյեմբեր	45,090.4
Հունիս	17,549.0	Դեկտեմբեր	45,090.4
ԸՆԴԱՄԵՆԸ			**45,090.4**

4.ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարողականի հաշվեքննությամբ գնահատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի հաշվեքննության կողմից 2020 թվականին իրականացված ֆինանսատնտեսական գործունեությունը՝ գնահատման համար կիրառելով կատարողականի հաշվեքննության հետևյալ սկզբունքները՝

- *Տնտեսում՝ կատարողականի հաշվեքննության սկզբունքով գնահատվել է ներքոհիշյալ կատարողների կողմից ձեռք բերվող ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ նվազագույնի հասցնելու գործողությունները.*
- *Ծախսային արդյունավետություն (արդյունավետություն)՝ կատարողականի հաշվեքննության սկզբունքով գնահատվել է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացմանն ուղղված գործողությունները.*

Ըստ << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի նկատմամբ հաշվեքննության արդյունքների բացահայտված անհամապատասխանությունները ըստ դրանց ամփոփ խմբավորման ունեն հետևյալ պատկերը՝

- Պայմանագրի 2.3.2 կետի և Պայմանագրի 3-րդ «Մոնիթորինգ» գլխի մասերով, Նախարարությունը սահմանված կարգով մոնիթորինգ չի իրականացրել:
- Կազմակերպությունում բացակայում է Պայմանագրի միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» 9)-րդ կետի պահանջի, այն է «...օրական առնվազն երեք անգամ...», սննդի տրամադրման փաստը հավաստող փաստաթղթերը:
- Պայմանագրում սահմանված 29 հաստիքային միավոր է նախատեսվել, իսկ հետագայում Համաձայնագրի փոփոխության միջոցով հանվել են, առանց որևէ պատշաճ հիմնավորման:
- Պայմանագրում սահմանված 29 աշխատակիցների հաստիքային միավորներով նախատեսվել է խնամել թվով 39 շահառու, կամ մեկ աշխատակցին բաժին է ընկել 1.34 խնամվողի պայմանական միավոր:
- Պայմանագրի 5.2.1 կետի պահանջի հետ առկա է անհամապատասխանություն, որի արդյունքում հունիս ամսին մատակարարված սննդի գումարը պետք է կազմեր 4,446.0 հազ. դրամ՝ 4,685.4 հազ. դրամի փոխարեն (գերազանցել է Պայմանագրի 5.2.1 կետով սահմանված մեկ խնամվողի հաշվարկով փոփոխուն ծախսերի գծով մեկ օրվա առավելագույն 3800 դրամ գինը): Արդյունքում Նախարարությունը 239.4 հազ. դրամով ավելի գումար է փոխհատուցել Կազմակերպությանը:
- Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա գինը փոփոխուն ծախսերի գծով, առանց որևէ հաշվարկային հենքի, սահմանվել է 3800 դրամ, որը հետագայում համապատասխան Համաձայնագրով առանց որևէ պատշաճ հիմնավորման ավելացվել է՝ կազմելով 4100 դրամ:
- 02.06.2020-15.06.2020թթ. ընկած ժամանակահատվածում Նախարարության գլխավոր քարտուղարի բանավոր

հանձնարարությամբ սննդի մատակարարումը իրականացվել է օրական առնավազն 50 շահառուի հաշվով՝ հաշվի չառնելով փաստացի խնամվող շահառուների և աշխատակիցների թվաքանակը:

- Պայմանագրի Հավելված 3-ի «Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ» և Հաշվետվության ցուցանիշների միջև առկա է անհամապատասխանություն: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարությանը ներկայացված 2020 թվականի հունիս ամսվա 1170 մարդ/օրը, փաստացի կազմել է 437 մարդ/օր: Նշվածի արդյունքում 2020 թվականի հունիս ամսին Նախարարությանը ներկայացված 4,685.4 հազ. դրամ գումարից թվով 733 հատ «պատրաստի սնունդ», 3,024.4 հազ. դրամի չափով ավելի է մատակարարվել:
- Հունիս ամսին աշխատակիցների հետ կնքվելիք պայմանագրերում բացակայում է գործատուի ստորագրությունը (Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի համաձայնեցված կամքի արտահայտությունը: «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:» ՀՀ աշխատանքային օրենսգիրք Գլուխ 2, հոդված 14-րդ), հետևաբար այդ պայմանագրերի շրջանակներում փոխանցված 8,167.5 հազ. դրամ աշխատանքի վարձատրությունը իրավական տեսանկյունից հիմնավորված չեն: Միաժամանակ հարկ է նշել նաև, որ բացառությամբ մի քանի դեպքերի՝ աշխատանքային պայմանագրերը կնքելիս չի պահպանվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետով սահմանված պահանջը՝ պայմանագրերում չեն նշվել պաշտոնները:
- 2020 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատանքի ընդունված 19 աշխատակիցներ Ծրագրի շրջանակներում տվյալ ժամանակահատվածում իրականացվելիք գործառույթներ չեն ունեցել, սակայն այդ ժամանակահատվածի համար Ծրագրի ֆինանսական միջոցներից նրանց վճարվել է 1,598.2 հազ. դրամ աշխատավարձ:
- Ծրագրում ընդգրկված մի շարք՝ «սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում», «իրավական խորհրդատվության տրամադրում», «պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում», «անհրաժեշտության դեպքում՝ բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում», «ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների, տարբեր խմբակների կազմակերպում», «աշխատանքային թերապիայի կազմակերպում» միջոցառումներ չեն կազմակերպվել և չեն իրականացվել համապատասխան

մասնագետների բացակայության կամ միջոցառումները անհրաժեշտ չհամարելու պատճառով:

- 2020 թվականի սեպտեմբերի 10-ին՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի միջև կնքվել էր «Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր», այն դեպքում, երբ Ծրագիրը գործում էր նույն տարվա հունիսի 2-ից:
- Լվացքատան ծառայություններ մատուցած ՍՊ ընկերության կողմից դուրս գրված ընդամենը 263.9 հազ. դրամի թվով չորս հարկային հաշիվների համաձայն մատուցված ծառայությունը կազմել է՝ «3 հատ» և «151,5 կգ»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնաճյուղում բացակայում է լվացքատուն ուղարկված «1 հատ» և/կամ «1 կգ» լվացքի բացվածքը՝ փափուկ գույքի անվանումները ու քանակը, պարզ չէ, թե ինչ ծավալի աշխատանք է կատարվել տվյալ ՍՊԸ-ի կողմից:
- ԱՁ-ի կողմից դուրս գրված 1,980.0 հազ. դրամի թվով մեկ հաշիվ վավերագրի համաձայն, Մասնաճյուղում կատարվել է 33,000 ք.մ տարածքի ախտահանման աշխատանքներ: ՈՒսումնասիրության ընթացքում արձանագրվեց, որ Մասնաճյուղում բացակայում է զբաղեցրած տարածքի պլան-հատակագիծը, ըստ որի հնարավոր կլիներ հաշվարկել ախտահանված տարածքը:
- Համապատասխան ՍՊԸ-ի կողմից դուրս գրված 1,053.0 հազ. դրամի թվով մեկ հարկային հաշվով՝ մատակարարվել էր 540 քառ.մ «հատակի լինոլեում», սակայն հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Մասնաճյուղում առկա չէ «հատակի լինոլեում»-ի կատարողական ակտը:
- ՍՊ ընկերության կողմից դուրս գրված 241.7 հազ. դրամի թվով մեկ հաշիվ վավերագրով՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ Աղավնաձորի մասնաճյուղի շենքի մասնակի նորոգում է իրականացվել, սակայն հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Մասնաճյուղում բացակայում է շենքի մասնակի նորոգման աշխատանքների կատարողական ակտը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագրում ընդգրկված աշխատակիցները տվյալ ժամանակահատվածում Մասնաճյուղի տարածքում գտնվել են շուրջօրյա, կատարվել է աշխատակիցների տվյալների համադրում, որի արդյունքում նույնականացված անձանց ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն ժամանակահատվածում թվով 10 աշխատակիցներ հանդիսացել են նաև այլ կազմակերպությունների աշխատակիցներ:

Ելնելով արձանագրվածի բովանդակությունից և հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանվածը, ՀՀ հաշվեքննիչ պալատը գտնում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված՝ Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19)

պայմանավորված բյուջետային ծախսերը (հաշվեքննության ենթարկված մասով), չեն արտացոլում ձեռք բերվող ռեսուրսներին ուղղված ծախսերի՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ նվազագույնի հասցնելու բավարար մակարդակի գործողություններ, ինչպես նաև նշված ժամանակահատվածում չի արձանագրվել նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացմանն ուղղված լիարժեք համապատասխան գործողություններ:

Կարեն Կարապետյան _____

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

« » հոկտեմբերի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Մ.Բաղրամյան 19, Երևան

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեյի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 02 խմբի 01 դասի «1032 Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» «11012 Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման և այլ միջոցառումների իրականացման շրջանակներում տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) միջոցառումով նախատեսված միջոցների շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև՝ 2020 թվականի հունիսի 26-ին կնքվել է թիվ ԴՏՊ-Ծ1032.Մ11012/20 ծածկագրով դրամաշնորհի պայմանագիր: Պայմանագրի առարկա է հանդիսանում՝ Կազմակերպության Աղավնաձորի մասնաճյուղում շուրջօրյա խնամվող տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման և այլ միջոցառումների իրականացման շրջանակներում ծառայությունների տրամադրման ապահովումը: Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի հունիսի 19-ի N 107-Ա/1 և 2020 թվականի օգոստոսի 4-ի N 129-Ա/1 հրամանների համաձայն՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Բալասանյանը 2020 թվականի հունիսի 2-ից մինչև հունիսի 30-ը գործուղվել էր «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի Աղավնաձորի մասնաճյուղ՝

կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի հսկողության պատասխանատու նշանակելու նպատակով:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվեց.

5.1 Կազմակերպության կանոնադրության ուսումնասիրության արդյունքները

Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման և այլ միջոցառումների իրականացման շրջանակներում տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունները կազմակերպելու նպատակով ստեղծվել էր «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության Աղավնաձորի մասնաճյուղը (այսուհետ՝ Մասնաճյուղ), համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 15-ի N 962-Ն որոշմամբ սահմանված պահանջների: Միաժամանակ հարկ է նշել, որ Մասնաճյուղը ստեղծվել էր «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի՝ Կոտայքի մարզի, Աղավնաձոր համայնքի Ղշով աղբյուր 1 հասցեում գտնվող անշարժ գույքի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման միջոցով: Հավելելով նշենք, որ կառավարության որոշումը ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, այսինքն, 2020 թվականի հունիսի 16-ից, այն դեպքում երբ, Աղավնաձոր համայնքի Ղշով աղբյուր 1 հասցեում հունիսի 2-ից արդեն իսկ գործում էր Ծրագիրը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 1

Առկա է անհամապատասխանություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի մարտի 16-ի թիվ 48-Ա/1 հրամանով հաստատված կանոնադրության II և III գլուխների պահանջների մասով: Այսպես, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին պատկանող, ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի Ղշով աղբյուր 1 հասցեում գտնվող անշարժ գույքի շահագործումը նախատեսված չէր «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *«Անհամապատասխանությունը առկա է, քանի որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 15-ի N 962-Ն որոշումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի հուլիսի 1-ի N115 հրամանի համաձայն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունում պետք է կատարվեր փոփոխություն, որով ստեղծվեր «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Աղավնաձորում: Սակայն հաշվի առնելով հարցի հրատապությունը՝ COVID-19 համավարակի տարածմամբ պայմանավորված՝ աշխատանքները սկսվել է հունիսի 2-ից:*

Կարծում ենք, որ անտրամաբանական կլիներ աշխատանքները չսկսել մինչև ՊՈԱԿ-ի կանոնադրությունում փոփոխություն կատարվեր և ստեղծվեր մասնաճյուղ, ինչը որոշակի ժամանակ էր պահանջում»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Հաշվեքննության օբյեկտի արձագանքի առաջին պարբերության պարզաբանմանը համաձայն Կազմակերպությունը ընդունում է առկա անհամապատասխանությունը, իսկ երկրորդ պարբերությունում ներկայացնում է նշված անհամապատասխանության առաջացման պատճառը:*

Շարունակելով, հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 15-ի N 962-Ն որոշման պահանջների շրջանակներում՝ 2020 թվականի **սեպտեմբերի 10-ին**՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի միջև կնքվել էր «Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր», այն դեպքում, երբ **Ծրագիրը գործում էր հունիսի 2-ից**: Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի հուլիսի 1-ի թիվ 115-Ա/1 հրամանով Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություն էր կատարվել, համաձայն որի «13.1 Կազմակերպության Աղավնաձորի մասնաճյուղի գտնվելու վայրն է Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի Ղշով աղբյուր 1»:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ 2020 թվականի հունիսի 2-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում Կազմակերպության գործունեությունը՝ Ծրագրի մասով, չի համապատասխանել տվյալ ժամանակահատվածում գործող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի մարտի 16-ի թիվ 48-Ա/1 հրամանով հաստատված կանոնադրության 13-րդ կետի պահանջին:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 2

Առկա է անհամապատասխանություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի մարտի 16-ի թիվ 48-Ա/1 հրամանով հաստատված կանոնադրության 13-րդ կետի պահանջի մասով, քանի որ 2020 թվականի հունիսի 2-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում Կազմակերպության գործունեությունը՝ Ծրագրի մասով, չի համապատասխանել հրամանով հաստատված կանոնադրության պահանջին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *Նույն տրամաբանությամբ է պայմանավորված, որ ծրագիրը սկսվել է իրականացվել 02.06.2020 թվականից, բայց <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսրան>> հիմնադրամի և <<Նորքի տուն-ինտերնատ>> ՊՈԱԿ-ի միջև գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվել է 10.09.2020 թվականին:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը հավաստում է 2020 թվականի հունիսի 2-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում առկա անհամապատասխանությունը:*

5.2 «Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ ԴՏՊ-Ծ1032-Մ11012/20 պայմանագրի ուսումնասիրության արդյունքները.

2020 թվականի հունիսի 26-ին Նախարարության և «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ ԴՏՊ-Ծ1032-Մ11012/20 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ **156,422.0** հազ. դրամ պայմանագրային գնով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Կազմակերպության Պայմանագրի գինը իր մեջ ներառում է.

ա/ **փոփոխուն** ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է **81,320.0** հազ. դրամ: Ընդ որում, մեկ խնամվողի հաշվարկով փոփոխուն ծախսերի գծով մեկ օրվա առավելագույն գինը կազմում է **3800 դրամ**:

բ/ **հաստատուն** ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է **75,102.0** հազ. դրամ:

Հարկ է նշել, որ վերը նշված փոփոխուն և հաստատուն ծախսերի ցուցանիշները կնքված Համաձայնագրերի արդյունքում փոփոխվել էին, տես սույն արձանագրության 5-ից 10-րդ էջերում ներկայացված վերլուծությունները:

Պայմանագրի անբաժանելի մասեր են կազմում՝

- Հավելված 1-ը՝ «Միջոցառումների նկարագիր» (այսուհետ՝ Միջոցառումներ),
- Հավելված 2-ը՝ «Ցուցանիշներ» (այսուհետ՝ Ցուցանիշներ),
- Հավելված 3-ը՝ «Հաշվետվություն՝ Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ»,
- Հավելված 4-ը՝ «Հաշվետվություն՝ Կազմակերպության փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ»,
- Հավելված 5-ը՝ «Ակտ՝ հանձնման-ընդունման»:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեց Պայմանագրի 2.3.2 կետի պահանջը, համաձայն որի «2.3.2 կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ»: Նույն պահանջը բխում է նաև Պայմանագրի 3-րդ «Մոնիթորինգ» գլխի պահանջից: Սույն գործառույթի իրականացման փաստը հավաստիացնող փաստաթղթեր Կազմակերպության

կողմից չներկայացվեց, քանի որ Կազմակերպությունում Նախարարությունը մոնիթորինգ չի իրականացրել:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 3

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.2 կետի և Պայմանագրի «Մոնիթորինգ» 3-րդ գլխի պահանջների մասով, Նախարարությունը սահմանված կարգով մոնիթորինգ չի իրականացրել:

ՈՒսումնասիրվող ժամանակաշրջանում Պայմանագրում կատարվել էր թվով 5 փոփոխություն, որի արդյունքում կնքվել էին N 1-ից - N 5 Համաձայնագրերը:

Ստորև բերվում է Պայմանագրի՝ այդ թվում նաև Համաձայնագրերի կից հավելվածների ուսումնասիրության արդյունքները:

5.2.1 «Միջոցառումների նկարագիր» Հավելված 1-ի ուսումնասիրության արդյունքների մասին.

Հաշվեքննության ընթացքում Միջոցառման ուսումնասիրությամբ պարզվեց, որ 2020 թվականի՝ հուլիսի 7-ին Համաձայնագիր N 1-ով և օգոստոսի 12-ին Համաձայնագիր N 2-ով կատարվել էին փոփոխություններ, համաձայն որի «միջոցառման իրականացման համար ներգրավված աշխատակիցների սնունդը ապահովում է տեղում» և այլ փոփոխություններ:

Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագիրը» ուսումնասիրելով կարելի է փաստել, որ մի շարք ամրագրված գործառույթները չեն համապատասխանում Ծրագրի նպատակներին և միաժամանակ հարկ է նշել, որ այդ գործառույթները իրականացնելու համար Ծրագրում ընդգրկված չէին համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ՝

1. «2) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում», այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով,
2. «3) իրավական խորհրդատվության տրամադրում», այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով,
3. «4) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում»,
   այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով,
4. «5) անհրաժեշտության դեպքում՝ բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում», այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով,
5. «7) ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների, տարբեր խմբակների կազմակերպում», այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով,

6. «8) աշխատանքային թերապիայի կազմակերպում», այս գործառույթը չեր իրականացվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով:

Հավելելով նշենք, որ վերը նշված գործառույթների իրականացման փաստը հավաստիացնող փաստաթղթեր Մասնաճյուղի կողմից չներկայացվեցին:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 4

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Միջոցառումների նկարագիր» Հավելված N 1-ով հաստատված «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» թիվ 2), 3), 4), 5), 7) և 8) գործառույթների չկատարման մասով: Այսպես, Մասնաճյուղուն բացակայում էին գործառույթների իրականացման փաստը հավաստիացնող փաստաթղթեր:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագիրը» մասում ամրագրված մի շարք գործառույթներ չեն համապատասխանում Ծրագրի նպատակներին և հետևաբար ֆինանսական ծախսերը արդյունավետ օգտագործելու նպատակով և համավարակով պայմանավորված սահմանափակումները պահպանելու նպատակով Ծրագրում ընդգրկված չէին համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը հավաստում է առկա անհամապատասխանությունը, համաձայն որի Պայմանագրի Հավելված N 1-ով հաստատված թիվ 2), 3), 4), 5), 7) և 8) գործառույթները չեն կատարվել:*

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Ծրագրի պատասխանատու Հ. Բալասանյան)՝ *Շահառուների հետ սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցումն իրականացվել է միայն հոգեբանի այցելության միջոցով, այն էլ՝ ընթացակարգերի խիստ պահպանմամբ: Այլ ծառայություններ չեն մատուցվել, և չէին կարող մատուցվել կապված կարանտինային խիստ պահանջների հետ, /հետևապես համապատասխան մասնագետներ նույնպես չեն ընդգրկվել/ կարծում եմ՝ ծրագրի պայմանգրի նկարագրի մեջ տվյալ պահանջները մեխանիկորեն վերցվել են «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունից:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը հավաստում է առկա անհամապատասխանությունը, համաձայն որի Պայմանագրի Հավելված N 1-ով հաստատված թիվ 2), 3), 4), 5), 7) և 8) գործառույթները չեն կատարվել:*

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեց Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» 9)-րդ կետի պահանջը համաձայն որի «9)

սննդի տրամադրում՝ **օրական առնվազն երեք անգամ ...**»: Սույն կետի պահանջի հաշվեքննությամբ արձանագրվեց, որ Կազմակերպությունում բացակայում է «պատրաստի սնունդի» բաղադրությանը վերաբերող որևէ փաստաթուղթ ինչպես նաև սննդի տրամադրման փաստը հավաստիացնող փաստաթուղթ (կամ մենյու-պահանջագիր):

Ամփոփելով վերոգրյալը կարելի է արձանագրել, որ Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» 9)-րդ կետի պահանջը համաձայն որի «9) սննդի տրամադրում՝ **օրական առնվազն երեք անգամ ...**», չի իրականացվել:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 5

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» 9)-րդ կետի պահանջի մասով, համաձայն որի «9) սննդի տրամադրում՝ օրական առնվազն երեք անգամ ...»: Կազմակերպությունում բացակայում է սննդի տրամադրման՝ օրական առնվազն երեք անգամ, փաստը հավաստող փաստաթղթեր:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *«Ինչ վերաբերվում է «Միջոցառումների նկարագիր» Հավելված N 1-ով հաստատված «կատարման ենթակա գործառույթների նկարագրի» սննդի տրամադրում օրական առնվազն երեք անգամ գործառույթի չկատարելուն, ապա տեղեկացնում եմ, որ մասնաճյուղում գործառույթները իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19 հունիսի 2020 թվականի N 107-Ա/1 հրամանով նշանակված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի հսկողության պատասխանատուի կողմից:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը հավաստում է առկա անհամապատասխանությունը, միաժամանակ հղում է կատարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19 հունիսի 2020 թվականի N 107-Ա/1 հրամանի վրա որով Ծրագրի պատասխանատու է նշանակվել Հ. Բալասանյանը, պատասխանատվությունը կապելով միայն Ծրագրի պատասխանատուի հետ: Հարկ է նշել, որ այդ վերը նշված հրամանի թերի հիմնավորված մոտեցումը հակասում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-հոդվածի բ/ կետի պահանջին, համաձայն որի գործադիր մարմինը (կամ գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը)՝ «բ) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները»: Ամփոփելով ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը:*

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Ծրագրի պատասխանատու Հ. Բալասանյան)՝ *Սնունդը տրամադրվել է օրը երեք անգամ: Սնունդն ընդունվել է բուժքրոջ կողմից, անհատական առանձին փաթեթներով և անմիջապես տրամադրվել շահառուներին: Ուստի, սննդամթերքի մուտքն ու ելքը չէր կարող իրականացվել: Ծրագիրը նոր էր սկսվել, ուներ բազմաթիվ փաստաթղթային և կենցաղային թերություններ, սակայն, օր օրի, շատ արագ աշխատում էինք վերացնել թերությունները և պահպանել ՀՀ առողջապահության նախարարության կողմից ընդունված ընթացակարգերը, որի արդյունքում, մեկ ամսվա ընթացքում, որևէ աշխատակից չէր վարակվել, և շահառուների առողջական վիճակի վատթարացում չենք ունեցել:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Ծրագրի պատասխանատուի կողմից ներկայացված առարկությունը չի ընդունվում, քանի որ սննդի ընդունման և շահառուներին տրամադրման գործառույթը պետք է փաստաթղթավորվեր ցանկացած պարագայում, հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի «4. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման (այլ դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու) պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության (այլ դեպքի կամ իրադարձության) ավարտից անմիջապես հետո:»: Ամփոփելով ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը:*

Շարունակելով, նշենք որ 2020 թվականի հուլիսի 7-ին Համաձայնագիր N 1-ով իրականացվել էր փոփոխություն, համաձայն որի «շահառուների թվաքանակի անկանխատեսելիությամբ պայմանավորված՝ սննդամթերքի մատակարարումը 02.06.2020թ.-15.06.2020թ. ժամանակահատվածում կիրականացվի օրական առնվազն 50 շահառուի համար:»: Սույն փոփոխությունը անընդունելի է, քանի որ այն իրականցվել էր հուլիսի 7-ին, այն դեպքում երբ հունիսի 29-ից Մասնաճյուղի շահառուները դուրս էին գրվել, այլ կերպ ասած սխալ պլանավորման արդյունքում ավելի մատակարարված սննդամթերքի համար Կազմակերպությունը «իրավական հիմք» է ներկայացրել: Միաժամանակ հարկ է նշել, որ շահառուների առավելագույն թիվը կազմել է 23 շահառու, այն էլ դա տևել էր ընդամենը 2 օր: Ամփոփելով նշենք նաև, որ փոփոխությունը հակասում է Պայմանագրի «Վճարման կարգը և ժամկետները» 4-րդ գլխի պահանջներին, համաձայն որի վճարումը պետք է իրականացվի **հիմք ընդունելով** փաստացի իրականացված ծախսերը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 6

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի «Վճարման կարգը և ժամկետները» 4-րդ գլխի պահանջների մասով: Այսպես, համաձայն N 1 Համաձայնագրով փոփոխված գործառույթի՝ 02.06.2020թ.-15.06.2020թ. մատակարարված սննդի մասով վճարումը պետք է իրականացվեր պայմանագրով նախատեսված առավելագույն թվով, այլ ոչ թե հիմք ընդունելով

փաստացի շահառուների քանակը, ինչը անընդունելի է: Ներկայացված անհամապատասխանության ֆինանսական հետևանքի հաշվարկը ներկայացված է սույն ընթացիկ արձանագրության 29-րդ էջում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *2020 թվականի հուլիսի 7-ի Համաձայնագիր N 1-ով կատարվել է փոփոխություն համաձայն որի միջոցառման իրականացման սկզբնական ժամանակահատվածում շահառուների թվաքանակի անկանխատեսելիությամբ պայմանավորված սննդամթերքի մատակարարումը 02.06.2020թ.-15.06.2020թ. ընկած ժամանակահատվածում կիրականացվի օրական առնավազն 50 շահառուի հաշվով, անկախ փաստացի խնամվող շահառուների և աշխատակիցների թվաքանակի: Ինչ վերաբերվում է ժամկետին՝ հանձնարարությունը տրվել է բանավոր ծրագրի իրականացման սկզբից, որը հետագայում ամրագրվել է փաստաթղթով: Նշենք որ նախատեսվում էր սնունդով ապահովել նաև աշխատակիցներին: Դա ամրագրված է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 15.05.2020 թվականի N 83-Ա/1 հրամանով (հետագայում՝ նշված հրամանում փոփոխություն կատարելու մասին 22.10.2020 թվականի N172-Ա/1 հրամանով):*

ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 15.05.2020 թվականի N 83-Ա/1 հրամանով և համավարակի կանխարգելման ռեժիմով պայմանավորնած և նախարարության գլխավոր քարտուղարի բանավոր հանձնարարությամբ մասնաճյուղում շարունակվել է աշխատակիցներին ապահովել սնունդով, որը հետագայում ամրագրվել է փաստաթղթով՝ հուլիսի 7-ի N1 համաձայնագրով:

Համավարակի կանխարգելման պայմաններում այլ կերպ հնարավոր չէր կազմակերպել աշխատանքը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Ծրագրի պատասխանատուի կողմից ներկայացված առարկությունը չի ընդունվում, քանի որ՝*

1. *ծախսերը հիմնավորվում են իրավական ակտերով սահմանված կարգով այլ ոչ թե բանավոր, այն էլ չի նշվել նույնիսկ բանավոր կարքադրողի պաշտոնը,*
2. *ինչ վերաբերվում է 2020 թվականի հուլիսի 7-ին կնքած Համաձայնագրին, ապա նա ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից, համաձայն N 1 Համաձայնագրի 6-րդ կետի պահանջի՝ կողմերի էլեկտրոնային ստորագրությունները դրվել էին հուլիսի 7-ին:*

Ամփոփելով ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, միաժամանակ նշելով որ ֆինանսական հետևանքի հաշվարկը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 29-րդ էջում:

Նախքան հաջորդ անհամապատասխանության ներկայացնելը հարկ է նշել, որ **Պայմանագրի անբաժանելի մաս կազմող** «Միջոցառումների նկարագիր» **Հավելված N** 1-ում, միջոցառման իրականացման համար ներգրավված

աշխատակիցներին սննդով ապահովելու գործառույթ ամրագրված չէր: Սակայն, 2020 թվականի հուլիսի 7-ին Համաձայնագիր N 1-ով իրականացված փոփոխությունում Միջոցառումների «կատարման ենթակա գործառույթների նկարագրում» ավելացվել էր թիվ 12)-րդ գործառույթը, համաձայն որի «12) միջոցառման իրականացման համար ներգրավված աշխատակիցների սնունդն ապահովում է տեղում»: Հարկ է ևս մեկ անգամ նշել, որ Համաձայնագիր N 1-ը ստորագրվել էր հուլիսի 7-ին և այն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից ու չի կարող ունենալ հետադարձ ուժ՝ համաձայն Համաձայնագիր N 1-ի 6-րդ կետի պահանջի, իսկ կողմերի էլեկտրոնային ստորագրությունները դրվել էին հուլիսի 7-ին:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ Մասնաճյուղում միջոցառման իրականացման համար ներգրաված աշխատակիցները աշխատել են հունիսի 2-ից մինչև հունիսի 29-ը, քանի որ հունիսի 29-ից բոլոր շահառուները դուրս էին գրվել, իսկ հուլիսի 7-ից համաձայն՝ Համաձայնագրի փոփոխությանը, աշխատակիցներին պետք է ապահովեին սննդով, ինչից բխում է որ հունիս ամսին աշխատակիցներին սննդի տրամադրումը իրավական տեսանկյունից ապահոված չէր: Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատակիցներին սննդի տրամադրման արդյունքում գոյացած ֆինանսական հետևանքի հաշվարկը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 28-րդ և 29-րդ էջերում:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 7

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի պահանջների (ցուցանիշների) մասով: Այսպես, հունիս ամսին Մասնաճյուղում միջոցառման իրականացման ներգրավված աշխատակիցների համար սննդով ապահովման գործառույթը Պայմանագրով ամրագրված չէր: Ներկայացված անհամապատասխանության ֆինանսական հետևանքի հաշվարկը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 28-րդ և 29-րդ էջերում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *2020 թվականի հուլիսի 7-ի Համաձայնագիր N 1-ով կատարվել է փոփոխություն համաձայն որի միջոցառման իրականացման սկզբնական ժամանակահատվածում շահառուների թվաքանակի անկանխատեսելիությամբ պայմանավորված սննդամթերքի մատակարարումը 02.06.2020թ.-15.06.2020թ. ընկած ժամանակահատվածում կիրականացվի օրական առնավազն 50 շահառուի հաշվով, անկախ փաստացի խնամվող շահառուների և աշխատակիցների թվաքանակի: Ինչ վերաբերվում է ժամկետին՝ հանձնարարությունը տրվել է բանավոր ծրագրի իրականացման սկզբից, որը հետագայում ամրագրվել է փաստաթղթով: Նշենք որ նախատեսվում էր սնունդով ապահովել նաև աշխատակիցներին: Դա ամրագրված է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 15.05.2020 թվականի N 83-Ա/1 հրամանով (հետագայում՝ նշված հրամանում փոփոխություն կատարելու մասին 22.10.2020 թվականի N172-Ա/1 հրամանով):*

ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 15.05.2020 թվականի N 83-Ա/1 հրամանով և համավարակի կանխարգելման ռեժիմով պայմանավորնած և նախարարության գլխավոր քարտուղարի բանավոր հանձնարարությամբ մասնաճյուղում շարունակվել է աշխատակիցներին ապահովել սնունդով, որը հետագայում ամրագրվել է փաստաթղթով՝ հուլիսի 7-ի N1 համաձայնագրով:

Համավարակի կանխարգելման պայմաններում այլ կերպ հնարավոր չէր կազմակերպել աշխատանքը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Ծրագրի պատասխանատուի կողմից ներկայացված առարկությունը չի ընդունվում, քանի որ՝ 2020 թվականի հուլիսի 7-ին կնքած Համաձայնագիրը, ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից և չի կարող ունենալ հետադարձ ուժ, համաձայն N 1 Համաձայնագրի 6-րդ կետի պահանջի՝ կողմերի էլեկտրոնային ստորագրությունները դրվել էին հուլիսի 7-ին:*

Ամփոփելով ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, միաժամանակ նշելով որ ֆինանսական հետևանքի հաշվարկը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 28-րդ և 29-րդ էջերում:

5.2.2 «Ցուցանիշները» Հավելված 2-ի ուսումնասիրության արդյունքների մասին.

Հաշվեքննության ընթացքում պարզվեց որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ցուցանիշներում իրականացվել էր թվով 4 փոփոխություններ, որի արդյունքում կնքվել էին Համաձայնագրեր՝

1. 2020 թվականի հուլիսի 7-ին՝ Համաձայնագիր N 1-ը,
2. 2020 թվականի դեկտեմբերի 1-ին՝ Համաձայնագիր N 3-ը,
3. 2020 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Համաձայնագիր N 4-ը,
4. 2020 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Համաձայնագիր N 5-ը:

Հաշվեքննության ընթացքում Ցուցանիշների ուսումնասիրությամբ պարզվեց որ 2020 թվականի՝ հուլիսի 7-ին Համաձայնագիր N 1-ում և մինչև տարեվերջ իրականացված Համաձայնագրեր NN 3-5-ում փոփոխության արդյունքում հանվել էին Պայմանագրի Ծուցանիշների՝ «Հաստիքային միավորների թվաքանակը» և «Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա նախատեսված գինը» տողերով նախատեսված քանակագումարային ցուցանիշները: Տվյալ դեպքում պարզ չէ՝

- ովքեր են Միջոցառման իրականացման համար ներգրավված աշխատակիցները (հարկ է նշել որ նրանց համար սնունդ է մատակարարվել),
- Պայմանագրի Ցուցանիշներում «Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա նախատեսված գինը» կազմել էր 7309 դրամ, ինչից բխում է որ Ծրագրի տևողությունը պետք է կազմեր **214 օր** (156,422,000.0 դրամ : 100 շահառու : 7,309.0 դրամ): Համաձայնագրերում հանելով «Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա նախատեսված գինը», հնարավոր չէ հաշվարկել Ծրագրի տեվողությունը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 8

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Միջոցառումների նկարագիր» Հավելված N 1-ով սահմանված գործառույթների մասով: Պայմանագրում նախատեսված 29 հաստիքային միավորները, հետագայում Համաձայնագրով հանվել է, առանց հիմնավորման:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը *(Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝* *Արձանագրության՝ «2.2.2 «Ցուցանիշները» Հավելված 2-ի ուսումնասիրության արդյունքների մասին» կետի վերաբերյալ, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը ներկայացրել է առարկություն, համաձայն որի՝ մեջբերում, «Ելնելով նրանից, որ հուլիսի 7-ի N 1 համաձայնագրով կատարվել է փոփոխություն՝ Պայմանագրում թիվ 2 հավելվածում, որի մեջ նշված էր «հաստիքային միավորների թվաքանակը 29 միավոր», N 1 համաձայնագրի այդ մասը հանվել է: Այդ իսկ պատճառով աշխատակիցների հետ կնքվել են քաղաքացիաիրավական՝ ծառայությունների մատուցման պայմանագրեր, որի հետևանքով վճարումները կատարվել են «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման 420000 ծածկագրով»:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առարկությունները անընդունելի է, քանի որ՝*

1. *Պայմանագրի գնագոյացումը իրականացվել է «29 հաստիքային միավորների թվաքանակից» ելնելով,*
2. *հանելով հաստիքային միավորների ցուցանիշները հնարավոր չի հաշվարկել Ծրագրի տևողությունը՝ 29 հաստիքային միավորների դեպքում այն կազմում էր 214 օր,*
3. *հուլիսի 7-ի N 1 համաձայնագրով կատարված փոփոխությունները վերաբերվում են հուլիսի 7-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար, իսկ անհամապատասխանության փաստը վերաբերվում է հունիս ամսվա ժամանակահատվածին,*
4. *հավելելով նշենք նաև, որ նշված 29 հաստիքային միավորների միաջոցով իրականացվել է ՊՈԱԿ-ի **կանոնադրական խնդիր**, որը միանշանակ պետք է իրականացվեր օրենքով սահմանված կարգով հաստիքացուցակով հաստատված մասնագետները, այլ ոչ թե չկարգավորված ձևով աշխատանքի ընդունված քաղաքացիները:*

Ստորև բերվում է Համաձայնագիր N 5-ով՝ «Ցուցանիշների» Հավելված 2-ով հաստատված քանակագումարային ցուցանիշները:

	Ցուցանիշներ	**Չափի միավոր**
1. Շահառուների միջին ամսական թվաքանակը՝	39	շահառու

2. Մարդ/օրերի տարեկան քանակը	2379	մ/օր
3. Մեկ շահառուի հաշվարկով մեկ օրվա գինը փոփոխուն ծախսերիգծով	4100	դրամ
4. Փոփոխուն ծախսեր	9,753.9	հազ. դրամ
5. Հաստատուն ծախսեր	45,090.4	հազ. դրամ
6. Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	54,844.3	հազ. դրամ

այդ թվում՝

<u>Խնամքի իրականացման գծով.</u>

ա/ ըստ ամիսների մարդ/օր

Ամիսները	**Ընդամենը (մարդ/օր)**	**Ամիսները**	**Ընդամենը (մարդ/օր)**
Հունվար	0	Հուլիս	1209
Փետրվար	0	Օգոստոս	0
Մարտ	0	Սեպտեմբեր	0
Ապրիլ	0	Հոկտեմբեր	0
Մայիս	0	Նոյեմբեր	0
Հունիս	1170	Դեկտեմբեր	0
ԸՆԴԱՄԵՆԸ			**2379**

բ/ փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց

Ամիսները	**Ընդամենը (հազ.դրամ)**	**Ամիսները**	**Ընդամենը (հազ.դրամ)**
Հունվար	0.0	Հուլիս	9,753.9
Փետրվար	0.0	Օգոստոս	9,753.9
Մարտ	0.0	Սեպտեմբեր	9,753.9
Ապրիլ	0.0	Հոկտեմբեր	9,753.9
Մայիս	0.0	Նոյեմբեր	9,753.9
Հունիս	4,797.0	Դեկտեմբեր	9,753.9
ԸՆԴԱՄԵՆԸ			**9,753.9**

Ապրանքի անվանումը	**Տնտեսագիտական դասակարգման սինթեթիկ հաշիվների անվանումը**	**Ծածկագիրը**	**Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)**
Սննդամթերք	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	9,753.9
Ընդամենը	**X**	**X**	**9,753.9**

<u>Հաստատուն ծախսերի գծով</u>

ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	44,220.4
Այլ ծախսեր	480000	870.0
Ընդամենը	**X**	**45,090.4**

բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
Հունվար	0.0	Հուլիս	21,866.6
Փետրվար	0.0	Օգոստոս	42,376.6
Մարտ	0.0	Սեպտեմբեր	42,376.6
Ապրիլ	0.0	Հոկտեմբեր	45,090.4
Մայիս	0.0	Նոյեմբեր	45,090.4
Հունիս	17,549.0	Դեկտեմբեր	45,090.4
ԸՆԴԱՄԵՆԸ			**45,090.4**

Ստորև բերվում է փոփոխուն և հաստատուն ծախսերի վերլուծության արդյունքները:

<u>Փոփոխուն ծախսերի վերլուծության արդյունքները.</u>

Փոփոխուն ծախսերի դիտարկմամբ կարելի է փաստել, որ Ցուցանիշների 4-րդ տողով «Փոփոխուն ծախսերի» մասով նախատեսված 9,753.9 հազ. դրամ գումարը նախատեսված է միայն **շահառուների** համար պլանավորված պատրաստի սննդի գումարից, այսինքն, փոփոխուն ծախսերում (կամ սնունդի ծախսերում) չի նախատեսվել՝ Պայմանագրում փոփոխությունների արդյունքում, աշխատակիցների համար պատրաստի սննդի գումարը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 9

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի և Համաձայնագրերի Հավելված N 2-ի «Ցուցանիշներ» 4-րդ տողով «Փոփոխուն ծախսերի» ցուցանիշների մասով: Այսպես, «Փոփոխուն ծախսերի» ցուցանիշներում չի հաշվարկվել Ծրագրում ընդգրկված աշխատակիցների համար նախատեսվելիք պատրաստի սննդի գումարը:

Շարունակելով փոփոխուն ծախսերի ուսումնասիրությունները, պարզվեց որ Կազմակերպությունում ինչպես նաև Նախարարությունում բացակայում են

փոփոխուն ծախսերի՝ նույնն է ինչ **սննդի գնագոյացման** գործընթացը հավաստիացնող փաստաթղթերը: Ամփոփելով կարելի է արձանագրել, որ փոփոխուն ծախսերի կամ սնունդի մասով Պայմանագրով պլանավորված 3800 դրամ գինը, որը հուլիսի 7-ից Պայմանագրի փոփոխության արդյունքում գինը դառնում է 4100 դրամ, փաստաթղթային հիմքեր չունի:

Հավելելով փոփոխուն ծախսերի ուսումնասիրությունները, հարկ է նշել որ «պատրաստի սնունդի» առավելագույն գինը նախատեսվել էր 3800 դրամ, իսկ հուլիսի 7-ից Պայմանագրի փոփոխության արդյունքում գինը դառնում է 4100 դրամ, այսինքն, հունիսին մատակարարված «պատրաստի սննդի» գինը չպիտի գերազանցեր 3800 դրամը: Հաշվեքննությամբ պարզվեց, որ մատակարարված «պատրաստի սննդի» գինը հիմնականում գերազանցել էր 3800 դրամը: Ստորև բերվում է «պատրաստի սնունդի» պլանային և փաստացի մատակարարված գների համեմատական պատկերը:

Հ/Հ	Հունիս ամսվա մատակարարման օրերը	Պայմանագրային գին	Մատակարարված «պատրաստի սննդի» գինը /դրամ/	Մատակարարված «պատրաստի սննդի» քանակը	Մատակարարված «պատրաստի սննդի» գումարը /հազ. դրամ/	Մատակարարված «պատրաստի սննդի» փոխհատուցման ենթակա գումարը գումարը /5-րդ սյուն*3800դր/, /հազ. դրամ/	Մատակարարված «պատրաստի սննդի» և պայմանագրով նախատեսված առավելագույն գումարի տարբերությունը /հազ. դրամ/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1	03	3800	3800	50	190.0	190.0	0.0
2	04-06	3800	4100	154	631.4	585.2	46,2
3	07-29	3800	4000	966	3,864.0	3,670.8	193.2
Ընդամենը		**X**	**X**	**X**	**4,685.4**	**4,446.0**	**239.4**

Վերը նշված աղյուսակից կարելի է արձանագրել, որ հունիս ամսին մատակարարված սննդի գումարը, **239.4 հազ. դրամով** (4,685.4 - 4,446.0) գերազանցել է Պայմանագրի 5.2.1 կետով սահմանված մեկ խնամվողի հաշվարկով փոփոխուն ծախսերի գծով մեկ օրվա առավելագույն 3800 դրամ գինը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 10

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 5.2.1 կետի պահանջի մասով: Այսպես, 2020 թվականի հունիս ամսին մատակարարված «պատրաստի սննդի» գինը (բացառությամբ հունիսի 3-ի մատակարարումը) գերազանցել էր Պայմանագրով կնքված 3800 դրամ գինը, արդյունքում հունիս ամսին Նախարարությունը 239.4 հազ. դրամով ավելի գումար է փոխհատուցել Կազմակերպությանը: Միաժամանակ հարկ է նշել որ վերը նշված գումարը ներառված է սույն ընթացիք եզրակացության 28-րդ և 29-րդ էջերում ներկայացված սննդի վերլուծության մեջ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19.06.2020 թվականի <<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հարություն Բալասանյանին գործուղելու մասին>> N107-Ա/1 հրամանի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ Աղավնաձոր մասնաճյուղի գործունեությանը և իրականացվող բոլոր միջոցառումներին վերաբերող փաստաթղթերը ստորագրությամբ հաստատվում են Պատասխանատուի կողմից, այնուհետև փոխանցվում << Նորքի տուն-ինտերնատ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին հետագա ընթացքն ապահովելու համար: Նշենք նաև, որ սնունդ մատակարարողների ընտրության և գնագոյացման հարցով ՊՈԱԿ-ը որևէ գործառույթ չի իրականացրել:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Առարկությունը չի ընդունվում, քանի որ չեն ներկայացվել վերոնշյալ անհամապատասխանությանը վերաբերող հիմնավորումներ, ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, այն է որ Նախարարությունը 239.4 հազ. դրամով ավելի գումար է փոխհատուցել Կազմակերպությանը:*

<u>Հաստատուն ծախսերի վերլուծության արդյունքները.</u>

Հաստատուն ծախսերի դիտարկմամբ կարելի է փաստել, որ Պայմանագրի Ցուցանիշներով գործառույթների իրականացման համար ներգրավված աշխատակիցների համար աշխատավարձը պլանավորվել էր հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույցի **«Աշխատանքի վարձատրություն»** տնտեսագիտական դասակարգման **410000** ծածկագրով: Սակայն հետագայում կնքված Համաձայնագրերի միջոցով, աշխատակիցների աշխատավարձի գումարը, հոդվածափոփոխության արդյունքում ձևակերպվել էր **«Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում»** տնտեսագիտական դասակարգման **420000** ծածկագրով, ինչը հակասում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանի N 16 Հավելվածով հաստատված պահանջներին:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 11

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի N 16 Հավելվածով հաստատված պահանջների մասով: Այսպես, Ծրագրում ընդգրկված աշխատակիցների աշխատանքի վարձատրության համար նախատեսված և փաստացի իրականացված ծախսերը պետք է ձևակերպվեին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանի N 16

Հավելվածով հաստատված պահանջներին համապատասխան՝ աշխատանքի վարձատրու-թյան ծախսերի համար նախատեսված 410000 կատեգորիայով:

5.2.3 Պայմանագրի Հավելված 3-ի «Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ» Հաշվետվության ուսումնասիրության արդյունքների մասին.

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեց Պայմանագրի կից Հավելված 3-ով ներկայացված Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի քանակային ցուցանիշների արժանահավատությունը: Հարկ է նշել, որ շահառուները 2020 թվականին խնամվել են միայն հունիս ամսին: Հավելելով նշենք, որ ընդունելության մատյանի ցուցանիշները համեմատելով փաստացի խնամվողների թվաքանակի շարժի Հաշվետվության հետ արձանագրվեց հետևյալը:

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակության վայրը	Դուրս է գրվել հիվանդանոցից և ընդունվել է մասնաճյուղ	Դուրս է գրվել մասնա ճյուղից	Խնամվող ների մարդ/օրերի քանակը	Հաշվետվությունով՝ Նախարարությանը ներկացված հունիսին խնամվածների քանակը մարդ/օր
1	Վ. Գ-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	23.06	19	
2	Է. Մ-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	28.06	24	
3	Հ. Գ-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	23.06	19	
4	Ա. Գ-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	26.06	22	
5	Ռ. Գ-ովա	Նորքի տուն-ինտերնատ	5.06	24.06	20	
6	Վ. Ն-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	24.06	20	
7	Ա. Բ-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	19.06	15	
8	Ջ. Բ-յան	Ջրվեժ	5.06	23.06	19	
9	Ք. Ս-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	27.06	23	
10	Ջ. Ա-յան	Նորքի տուն-ինտերնատ	5.06	26.06	22	
11	Գ. Ս-յան	Ավագ սերունդ ՀԿ	5.06	29.06	25	
12	Մ. Ն-ովա	Նորքի տուն-ինտերնատ	5.06	23.06	19	
13	Հ. Խ-յան	Նորքի տուն-ինտերնատ	8.06	27.06	20	
14	Թ. Կ-ինա	Նորքի տուն-ինտերնատ	8.06	24.06	17	
15	Է. Խ-յան	Նորքի տուն-ինտերնատ	8.06	24.06	17	
16	Վ. Մ-յան	Ավագ սերունդ ՀԿ	8.06	29.06	22	
17	Գ. Ս-յան	Նորքի տուն-ինտերնատ	9.06	19.06	11	
18	Ա. Հ-յան	Ավագ սերունդ ՀԿ	11.06	29.06	19	
19	Մ. Մ-յան	Ավագ սերունդ ՀԿ	11.06	29.06	19	
20	Լ. Ա-յան	Ավագ սերունդ ՀԿ	11.06	29.06	19	
21	Ռ. Մ-յան	Ավագ սերունդ ՀԿ	12.06	22.06	11	

22	Ա. Պ-յան	Նորքի տուն-ինտերնատ	16.06	27.06	12	
23	Լ. Ս-ովա	Նորքի տուն-ինտերնատ	18.06	26.06	9	
24	Հ. Ջ-յան	տուն	20.06	29.06	10	
25	Ս. Ի-յան	տուն	26.06	29.06	4	
Ընդամենը		**X**	**X**	**X**	**437**	**1170**

Մասնաճյուղը հունիսին փաստացի խնամել է 437 մարդ/օր, սակայն Նախարարությանը ներկայացվել էր 1170 մարդ/օր:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 12

Առկա է անհամապատասխանություն՝ Պայմանագրի Հավելված 3-ի «Կազմակերպության փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ» Հաշվետվության ցուցանիշների մասով: Հաշվեքննությամբ արձանագրվեց որ Նախարարությանը ներկայացված 1170 մարդ/օրը, կազմել էր 437 մարդ/օր: Այսպես, արձանագրված անհամապատասխանությունից բխող ֆինանսական հետևանքը ներկայացված է սույն ընթացիք եզրակացության 28-րդ և 29-րդ էջերում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը *(Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝* *Մարդ օրերի մասով տեղեկացնում ենք, որ Պայմանագրի N3 հավելվածով սահմանված հաշվետվությունը նախապատրաստվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19.06.2020 թվականի N107-Ա/1 հրամանով նշանակված Պատասխանատուի կողմից և ըստ որի խնամվողների փաստացի մարդ օրերի թիվը սահմանվել է 1170 և ՊՈԱԿ-ը՝ վերոնշյալ հրամանի 4-րդ կետի 2) ենթակետի համաձայն ապահովել է հետագա ընթացքը:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված առարկությունները անընդունելի է, քանի որ անհամապատասխանության խնդրի մասին առարկայական բացատրություն չի ներկայացվել, այսինքն ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, այն է որ Կազմակերպության իրականացված խնամքը կազմել է 437 մարդ/օր:*

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը *(Ծրագրի պատասխանատու Հ. Բալասանյան)՝* *Ձեզ եմ ներկայացնում մարդ/օրերի հաշվարկը, ինչպես նաև խնդրում եմ հաշվի առնել տվյալ խնդրի վերաբերյալ մեր՝ 2021 թվականի օգոստոսի 6-ին թիվ Ն/ՀԲ/17418-գրությամբ ներկայացված բացատրությունները: Սննդի մարդ/օրերի քանակի տարբերությունը առաջացել է այն հանգամանքով, որ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում՝ վիրուսի բռնկմամբ պայմանավորված, կոնտակտավոր հանդիսացող աշխատակիցները մեկուսացվել են Բյուրեղավանի նախկին գիշերօթիկի շենքում և նրանց տրամադրվել է սնունդ, ախտահանիչ ու հիգիենիկ պարագաներ:*

Աշխատողներ

Աշխատող/ ամիս, օր	03	04	05	06	07	08	09	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	Ընդ.
Աղավնաձոր	7	15	17	17	17	17	17	17	17	17	17	16	18	11	14	14	15	16	18	18	16	17	16	16	15	14	2	411
Աղավնաձոր մաշնաճյուղի պատասխանատու	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	27
Պահակ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	27
Բյուրեղավան	4	4	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3													47
Ընդամենը	13	21	22	22	22	22	22	22	22	22	22	21	23	16	19	16	17	18	20	20	18	19	18	18	17	16	4	512

Շահառուներ

Աշխատող/ ամիս, օր	03	04	05	06	07	08	09	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	Ընդ.
Աղավնաձոր			12	12	12	16	17	17	20	21	21	21	21	22	22	23	23	22	22	22	21	17	13	14	12	7	7	437
Բյուրեղավան	11	11	11	11	11	11	11	11	11	11	11	11	11	11														154
Ընդամենը	11	11	23	23	23	27	28	28	31	32	32	32	32	33	22	23	23	22	22	22	21	17	13	14	12	7	7	591
Ընդամենը	**24**	**32**	**45**	**45**	**45**	**49**	**50**	**50**	**53**	**54**	**54**	**53**	**55**	**49**	**41**	**39**	**40**	**40**	**42**	**42**	**39**	**36**	**31**	**32**	**29**	**23**	**11**	**1103**

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Ծրագրի պատասխանատուի կողմից ներկայացված առարկությունները անընդունելի է, քանի որ Ծրագրի պատասխանատուի կողմից ներկայացված խնամվողների՝ սնունդ ստացողների, հաշվարկում ներառված են «Բյուրեղավանի հեպհիվանդանոցային խնամքի կենտրոնի» շահառուների և աշխատակիցների հունիս ամսվա մարդ/օրերի հաշվարկը: Հարկ է նշել, որ այսպես կոչված «Բյուրեղավանի հեպհիվանդանոցային խնամքի կենտրոնը»՝*

ա/ չի հիշատակվում ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 15-ի թիվ 962-Ն կառավարության որոշման մեջ, որով սահմանվել էր Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման ծրագիրը իրականացնել Աղավնաձորի համայնքում,

բ/ չի հիշատակվում «Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ ԴՏՊ-Ծ1032-Ս11012/20 ծածկագրով պայմանագրում:

Անդրադառնալով Ծրագրի պատասխանութի կողմից ներկայացված 1103 մարդ/օրերի ցուցանիշներից, պետք է նվազեցնել հետևյալ ցուցանիշները.

1. *աշխատողների ցուցանիշով՝ 512 մարդ/օր,*
2. *Բյուրեղավանում խնամվող շահառուների ցուցանիշով՝ 154 մարդ/օր:*

Արդյունքում կստանանք 437 մարդ/օր, որն էլ արձանագրվել էր հաշվեքննության ընթացքում:

Ամփոփելով ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, այն է որ Կազմակերպության իրականացված խնամքը կազմել է 437 մարդ/օր:

Վերը նշված անհամապատասխանության արդյունքում գոյացած ֆինանսական հետևանքը տես սույն ընթացիկ եզրակացության 28-րդ 29-րդ էջերում:

5.2.3[1] «Կազմակերպության փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ» Հավելված 4-ի ուսումնասիրության արդյունքների մասին.

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեց Պայմանագրի կից Հավելված 4-ով ներկայացված փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարների արժանահավատությունը:

Ստորև բերվում է Հաշվետվությունով ներկայացված Ծրագրի իրականացման արդյունքում փաստացի կատարված ծախսերի վերլուծությունը:

5.2.3[1].1 Փոփոխուն ծախսերի՝ «Կենցաղային և հանրային սննդի նկութեր» տնտեսագիտական դասակարգման 426700 ծածկագրով ներկայացված ծախսերի ուսումնասիրության արդյունքների մասին.

Համաձայն Պայմանագրի կից Հավելված 4-ով ներկայացված փոփոխուն ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 426700 ծածկագրով ներկայացված ծախսերի, ճշտված նախահաշվով նախատեսված **34,218.6** հազ. դրամի դիմաց բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը կազմել էր **4,685.4** հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում արձանագրվեց՝

1. Ծրագրի իրականացման ընթացկում Մասնաճյուղի սննդի մատակարարներ են հանդիսացել՝ 03.06-ից մինչև 06.06-ը Ա/Ձ Նարեկ Բերբերյանը, իսկ 07.06-ից մինչև 29.06-ը «Էպիկուր» ՍՊԸ-ն: Համաձայն Հաշիվ ապրանքագրերի Մասնաճյուղին մատակարարվել է 1230 հատ «պատրաստի սնունդ», ճշգրտման արդյունքում այն նվազել էր 60 հատով և կազմել էր **1170 հատ «պատրաստի սնունդ»՝ 4,685.4 հազ. դրամի** (50 հատ * 3.8 հազ. դրամ + 154 հատ * 4.1 հազ. դրամ + 966 հատ * 4.0 հազ. դրամ):
2. Մասնաճյուղում սննդակարգի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Մասնաճյուղում բացակայում են սննդի դուրս գրման հետ կապված փաստաթղթերը (մենյու-պահանջագիր, ելքի ապրանքագիր, ակտեր դուրս գրման և այլն), իսկ «պատրաստի սնունդը» ստանալիս այն միանգամից տրամադրվել է շահառուներին և աշխատակիցներին, այսինքն, տվյալ դեպքում հնարավոր չի հավաստիանալ

Միջոցառումներով ամրագրված պահանջի կատարման փաստը, այն է «սննդի տրամադրում՝ օրական առնվազն երեք անգամ …»:

3. Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեց Սննդի փաստացի իրականացված ծախսերը: Հաշվի առնելով այն հանգամանքը որ «պատրաստի սնունդը» տրամադրվել էր ինչպես շահառուներին այնպես էլ աշխատակիցներին, հաշվեքննության ընթացքում պատրաստվեց Մասնաճյուղում փաստացի խնամվող շահառուների և աշխատանքի վայրում գտնվողների օրական շարժի համեմատականը մատակարարված «պատրաստի սնունդի» քանակի հետ:

Հ/Հ	Հունիս ամսվա օրերը	Տվյալ օրվա ընթացքում Կազմակերպությունում ներկա շահառուների և աշխատակիցների քանակը՝ այդ թվում /3.1-րդ սյուն. + 3.2-րդ սյուն./	Շահառուների քանակը	Աշխատակիցների քանակը	Հաշիվ ապրանքագրերով մատակարարված (այդ թվում՝ ճշգրտված) «պատրաստի սնունդի»			Ավել մատակարարված «պատրաստի սնունդի» քանակը /4.1-րդ սյուն. – 3.1-րդ սյուն./	Ավել մատակարարված «պատրաստի սննդի» գումարը /հազ. դրամ/ /5.1-րդ սյուն.* 4.2-րդ սյուն./
					քանակը	գին /հազ. դրամ/	գումարը /հազ. դրամ/		
1	*2*	*3*	*3.1*	*3.2*	*4.1*	*4.2*	*4.3*	*5.1*	*5.2*
1	01	0	0	0	0	0	0.0	0	0
2	02	7	0	7	0	0	0.0	0	0
3	03	8	0	8	50	3,8	190.0	50	190.0
4	04	16	0	16	50	4,1	205.0	50	205.0
5	05	30	12	18	52	4,1	213.2	40	167.4
6	06	29	12	17	52	4,1	213.2	40	167.4
7	07	29	12	17	50	4	200.0	38	154.4
8	08	34	16	18	50	4	200.0	34	139.2
9	09	35	17	18	50	4	200.0	33	135.4
10	10	36	17	19	50	4	200.0	33	135.4
11	11	38	20	18	53	4	212.0	33	136.0
12	12	40	21	19	54	4	216.0	33	136.2
13	13	39	21	18	54	4	216.0	33	136.2
14	14	37	21	16	53	4	212.0	32	132.2
15	15	40	21	19	55	4	220.0	34	140.2
16	16	35	22	13	49	4	196.0	27	112.4
17	17	38	22	16	41	4	164.0	19	80.4
18	18	38	23	15	39	4	156.0	16	68.6
19	19	39	23	16	38	4	152.0	15	64.6
20	20	38	22	16	42	4	168.0	20	84.4
21	21	41	22	19	42	4	168.0	20	84.4
22	22	42	22	20	42	4	168.0	20	84.4
23	23	38	21	17	42	4	168.0	21	88.2
24	24	35	17	18	42	4	168.0	25	103.4

25	25	30	13	17	25	4	100.0	12	50.6
26	26	32	14	18	18	4	72.0	4	18.8
27	27	26	11	15	33	4	132.0	22	90.2
28	28	22	8	14	33	4	132.0	25	101.6
29	29	10	7	3	11	4	44.0	4	17.4
30	30	2	0	2	0	4	0.0	0	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ		**884**	**437**	**447**	**1170**	**X**	**4685.4**	**733**	**3024.4**

Վերը նշված ցուցանիշներից կարելի է արձանագրել, որ Ծրագրի շրջանակներում՝

1. հունիս ամսին մատակարարվել էր **1170** հատ «պատրաստի սնունդ» **4,685.4** հազ. դրամ գումարի չափով,
2. հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն Պայմանագրի, սնունդը պետք է տրամադրվեր միայն **շահառուներին**, տվյալ դեպքում փաստացի ծախսը պետք է կազմեր **437** հատ «պատրաստի սնունդ», **1,660.6** հազ. դրամ գումարի չափով (437 հատ * 3.8 հազ. դրամ),
3. արդյունքում, **733** հատ «պատրաստի սնունդ», **3,024.4** հազ. դրամի ավելի էր մատակարարվել:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է արձանագրել որ Կազմակերպությունը սննդի մասով Նախարարությանը փոխհատուցման համար **3,024.4** հազ. դրամի ավելի, գումար է ներկայացրել, որն էլ փոխհատուցվել է: Միաժամանակյ հարկ է նշել որ 23-րդ էջում բերված **239.4** հազ. դրամ գումարը ներառված է վերը նշված **3024.4** հազ. դրամ գումարի մեջ:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 13

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի «Կազմակերպության փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ» Հավելված 4-ի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 426700 ծածկագրով փոխհատուցման համար նախատեսված գումարի մասով: Այսպես, Մասնաճյուղի կողմից ներկայացված 4685.4 հազ. դրամ գումարի փաստացի սննդի ծախսի հաշվեքննությամբ արձանագրվեց, որ իրավական հիմքերով ապահոված փաստացի ծախսը կազմել է 1,660.6 հազ. դրամ, այսինքն 3,024.4 հազ. դրամի չհիմնավորված սննդի գումար է փոխհատուցվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը *(Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝* *2.2.3.1 կետի անհամապատասխանության կապակցությամբ կրկին նշում ենք, որ 2020 թվականի հունիս ամսին նշված գործընթացները կազմակերպվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19.06.2020 թվականի N107-Ա/1 հրամանով նշանակված Պատասխանատուի կողմից և համաձայն վերոնշյալ հրամանի 4-րդ կետի 2) ենթակետի ՊՈԱԿ-ի կողմից ապահովվել է հետագա ընթացքը: Պատասխանատուի կողմից ՊՈԱԿ է ներկայացվել պատրաստի սննդի*

ստացման մասին օրական արձանագրություններ, որի հիման վրա կատարվել է համապատասխան վճարումները, որը կազմել է 4,685.4 հազար դրամ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված առարկությունները անընդունելի է, քանի որ անհամապատասխանության խնդրի մասին առարկայական բացատրություն չի ներկայացվել, հետևաբար ևս մեկ անգամ հաստատում ենք անհամապատասխանության փաստը, համաձայն որի Նախարարությունը 3,024.4 հազ. դրամի չհիմնավորված սննդի գումար է փոխհատուցվել Կազմակերպությանը:*

5.2.3 [1].2 Հաստատուն ծախսերի՝ «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 421200 ծածկագրով ներկայացված ծախսերի ուսումնասիրության արդյունքների մասին.

Համաձայն Պայմանագրի կից Հավելված 4-ով ներկայացված հաստատուն ծախսերի «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 421200 ծածկագրով ներկայացված ծախսերի, ճշտված նախահաշվով նախատեսված **400.6** հազ. դրամի դիմաց բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը կազմել էր **365.4** հազ. դրամ՝ 421220 ծածկագրով «ջեռուցման ծառայության» մասով: ՈՒսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ առկա է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի նոյեմբերի 13-ին դուրս գրված հարկային հաշիվ, համաձայն որի հոկտեմբեր ամսվա համար բնական գազի հաշիվ է ներկայացվել 365.4 հազ. դրամի:

5.2.3 [1].3 Հաստատուն ծախսերի՝ «Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 424100 ծածկագրով ներկայացված ծախսերի ուսումնասիրության արդյունքների մասին.

Համաձայն Պայմանագրի կից Հավելված 4-ով ներկայացված հաստատուն ծախսերի «Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 424100 ծածկագրով ներկայացված ծախսերի, ճշտված նախահաշվով նախատեսված **33,392.3** հազ. դրամի դիմաց բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը կազմել էր **23,634.9** հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում արձանագրվեց, որ առկա է ծախսերը հիմնավորող հետևյալ փաստաթղթերը՝

1. «Կուբ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված **263.9** հազ. դրամի թվով 4 հարկային հաշիվներ՝ լվացքատան ծառայություններ: Լվացքատան կողմից մատուցված ծառայությունը կազմել էր՝ «3 հատ» և «151,5 կգ»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնաճյուղում բացակայում է լվացքատուն ուղարկված «1 հատ» և/կամ «1 կգ» լվացքի բացվածքը՝ փափուկ գույքի անվանումները և քանակը, հասկանալի չի ինչ ծավալի աշխատանք է կատարվել «Կուբ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

2. «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից դուրս գրված **1,506.9** հազ. դրամի թվով 2 հաշիվ վավերագրեր՝ կոմունալ ծախսերի փոխհատուցում հունիս և սեպտեմբեր ամիսների համար: ՈՒսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Մասնաճյուղում բացակայում է հիմնադրամի կողմից ներկայացված հաշիվ վավերագրերի բացվածքը, այսինքն, նշված չի կոմունալ ծառայությունների անվանումները և գումարների համամասնությունները:

3. Վաչագան Անտոնյան ԱՁ-ի կողմից դուրս գրված **1,980.0** հազ. դրամի թվով 1 հաշիվ վավերագիր՝ 33000 քառ.մ տարածքի ախտահանման համար: ՈՒսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Մասնաճյուղում բացակայում է Մասնաճյուղի տարածքի պլանը, ըստ որի հնարավոր կլիներ նշել ախտահանված տարածքը:

4. «Աշկար» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված **1,053.0** հազ. դրամի թվով 1 հարկային հաշվով՝ մատակարարվել էր 540 քառ.մ «հատակի լինոլեում»: ՈՒսումնասիրությամբ պարզվեց որ՝
   4.1 «Հատակի լինոլեում» մատակարարված ապրանքի ծախսը պետք է ձևակերպվեր **«Նյութեր (ապրանքներ)» 426000** ծածկագրի ծախսային հոդվածով, այլ ոչ թե **«Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում» 424000** ծածկագրի ծախսային հոդվածով ձևակերպում:
   4.2 Մասնաճյուղում բացակայում է «հատակի լինոլեում»-ի կատարողական (տեղադրման) ակտը:

5. «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված **241.7** հազ. դրամի թվով 1 հաշիվ վավերագրով՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ Աղավնաձորի մասնաճյուղի շենքի մասնակի նորոգում էր իրականացվել: ՈՒսումնասիրությամբ պարզվեց որ՝
   5.1 «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը պետք է ձևակերպվեր **«Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)» 425000** ծածկագրի ծախսային հոդվածով, այլ ոչ թե **«Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում» 424000** ծածկագրի ծախսային հոդվածով ձևակերպում:
   5.2 Մասնաճյուղում բացակայում էր շենքի մասնակի նորոգման աշխատանքների կատարողական (նորոգման) ակտը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն՝ Ա. Մելքոնյան)՝ *Անհամապատասխանության մասին տեղեկացնում ենք, որ մասնաճյուղի կողմից ներկայացվել են հաշիվ վավերագրերի բացվածքը, որտեղ նշված են կոմունալ ծառայությունների անվանումները և գումարները: 3., 4., 5.*

Փաստաթղթերը առկա են, և ներկայացվել են մասնաճյուղի կողմից, ինչի հիման վրա էլ կատարվել են վճարումներ համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19.06.2020 թվականի N107-Ա/1 հրամանի 4-րդ կետի 2) ենթակետի:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված առարկությունները անընդունելի է, քանի որ Կազմակերպության կողմից չեն ներկայացվել վերը նշված ծախսերի հիմնավորող փաստաթղթերը:*

6. Կազմակերպության հաշվապահության կողմից ներկայացված տեղեկատվությանը համաձայն՝ հունիսից դեկտեմբեր ամիսներին վճարվել է **13,955.3** հազ. դրամի աշխատավարձ, որից **8,167.5** հազ. դրամը հունիս ամսվա համար: Հաշվեքննությամբ արձանագրվեց որ՝
   6.1 Աշխատավարձի հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվեցին Կազմակերպության կողմից ներկայացված «ծառայությունների մատուցման պայմանագրերը», արդյունքում՝
      6.1.1 Հունիս ամսվա պայմանագրերում բացակայում է գործատուի ստորագրությունը, այսինքն, տվյալ դեպքում կարելի է փաստել, որ հունիս ամսվա համար պայմանագրեր չեն կնքվել (դրանք ուժի մեջ չեն մտել), հետևաբար փոխանցված գումարը իրավական տեսանկյունից հիմնավորված չէ:
      6.1.2 Պայմանագրերում՝ բացառությամբ մի քանի դեպքերի, չի նշվել պաշտոնի անվանումը, ինչը նախատեսված է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետով:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 14

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ և 84.1-րդ հոդվածներով սահմանված կետերի պահանջների մասով: Հունիս ամսվա պայմանագրերում բացակայում է գործատուի ստորագրությունը, հետևաբար այդ պայմանագրերի շրջանակներում փոխանցված 8,167.5 հազ. դրամի գումարները իրավական տեսանկյունից հիմնավորված չեն: Միաժամանակ հարկ է նշել նաև, որ բացառությամբ մի քանի դեպքերի՝ աշխատանքային պայմանագրերը կնքելիս չի պահպանվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետով սահմանված պահանջը՝ պայմանագրերում չեն նշվել պաշտոնները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն՝ Ա. Մելքոնյան)՝ *Հունիս ամսվա պայմանագրերում ՊՈԱԿ-ի տնօրենի ստորագրությունը բացակայում է, քանի որ աշխատակիցների ընտրությունը և ընդունումը իրականացվել է Պատասխանատուի և նախարարության գլխավոր քարտուղարի կողմից: ՊՈԱԿ-ի տնօրենը իրավական տեսանկյունից չէր կարող ստորագրել և կնքել պայմանագրերը, քանի որ ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը և մասնաճյուղի գրանցումը կատարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի*

նախարարի 2020 թվականի հուլիսի 1-ի N115 հրամանի համաձայն հուլիս 8-ին: Աշխատակիցների վճարումը կատարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 19.06.2020 թվականի N107-Ա/1 հրամանի 4-րդ կետի 2) ենթակետի հիման վրա, համաձայն որի՝ Պատասխանատուն համապատասխան աշխատողների մասով ներկայացրել է կատարված աշխատանքի ընդունման ակտերը իր ստորագրությամբ, իսկ ՊՈԱԿ-ը ապահովել է հետագա ընթացքը:

Հաշվեքննողի կողմից նշված այն դիտողությունը, որ պայմանագրերում պաշտոնները նշված չեն, տեղեկացնում ենք, որ աշխատողնրի հետ կնքվել է որոշակի ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրեր, որտեղ ներկայացված են ծառայությունների նկարագրերը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված բացատրությունը հավաստիացնում է այն փաստը, որ հունիս ամսվա պայմանագրերում բացակայում է գործատուի ստորագրությունը, այսինքն, իրավական տեսանկյունից՝*

1. *Հունիս ամսին պայմանագրեր չեն կնքվել,*
2. *Փոխանցված գումարները իրավական տեսանկյունից հիմնավորված չեն:*

*Միաժամանակ հարկ է նշել որ ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից հունիսին աշխատանքային պայմանագրերը չեն ստորագրվել պատճառաբանելով կանոնադրությունում փոփոխություն չկատարելու փաստը՝ ինչը հաշվեքննողի կողմից ընդունելի է, սակայն Ծրագրի իրականացման այլ գործառույթների մասով, օրինակ սննդի գնման մասով, այդ **հանգամանքը հաշվի չի առնվել**:*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կազմակերպությունը հավաստիացնում է որ հունիս ամսվա պայմանագրերը գործատուի (տնօրենի) կողմից ստորագրված չէ, հետևաբար արձանագրված անհամապատասխանությունը առկա է, այսինքն, պայմանագրերի շրջանակներում հունիս ամսվա համար փոխանցված **8,167.5 հազ. դրամի** գումարները իրավական տեսանկյունից հիմնավորված չեն:*

6.2 Ինչպես բազմիցս նշվել էր սույն արձանագրությունում, Ծրագրի շրջանակներում ծառայությունը մատուցվել էր միայն հունիս ամսին, այսինքն, մնացած ամիսներին պետք էր ապահովել միայն պահակային ծառայությունը, ինչը բխում է գույքի անհատույց օգտագործման պայմանագրից: Ստորև բերվում է հուլիսից-դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատողների ցանկը՝ ըստ պաշտոնների, հարկ է նշել որ աղյուսակի ցուցանիշների հիմք է հանդիսացել Մասնաճյուղում վարվող աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը:

Հ/Հ	Պաշտոնների անվանումը	Աշխատողների քանակը
	Հուլիս	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1

Ընդամենը		**2**
	Օգոստոս	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1
3	Պահակ	3
Ընդամենը		**5**
	Սեպտեմբեր	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1
3	Պահակ	3
Ընդամենը		**5**
	Հոկտեմբեր	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1
3	Պահակ	3
4	Հնոցապան	1
5	Էլեկտրագետ	1
6	Մաքրուհի	2
Ընդամենը		**9**
	Նոյեմբեր	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1
3	Պահակ	3
4	Հնոցապան	2
5	Էլեկտրագետ	1
6	Մաքրուհի	2
7	Օժանդակ բանվոր	1
8	Ավագ խոհարար	1
9	Խոհանոցի աշխատող	2
10	Բուժքույր	3
11	Սանիտար	6
Ընդամենը		**23**
	Դեկտեմբեր	
1	Ծրագրի ղեկավար	1
2	Պարետ	1
3	Պահակ	3
4	Հնոցապան	3
5	Էլեկտրագետ	1
6	Մաքրուհի	2
7	Օժանդակ բանվոր	1
8	Ավագ խոհարար	1

9	Խոհանոցի աշխատող	3
10	Բուժքույր	3
11	Սանիտար	6
Ընդամենը		**25**

ղ

յուսյակից կարելի է փաստել որ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում բացի պահակ/պարետ/ծրագրի ղեկավարից, աշխատել են նաև այլ մասնագետներ: Ստորև բերվում է Մասնաճյուղում աշխատած այդ մասնագետների քանակը և Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարված աշխատավարձի չափը ըստ ամիսների՝

- հոկտեմբերին – 4 ավել աշխատող՝ (9 հաստիք – 5 հաստիք), Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել է **357.1** հազ. դրամ (77.8 + 58.1 + 110.6 + 110.6),
- նոյեմբերին – 18 աշխատող (23 հաստիք – 5 հաստիք), Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել է **591.7** հազ. դրամ (77.8 + 80.5 + 58.1 + 110.6 +73.4 + 80.7 + 110.6),
- դեկտեմբերին – 20 աշխատող (25 հաստիք – 5 հաստիք), Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել է **644.0** հազ. դրամ (77.8 + 80.5 + 58.1 + 110.6 +73.4 + 80.7 + 52.3 + 110.6):

Վերոգրյալից կարելի է փաստել, որ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում բացի պահակ/պարետ/ծրագրի ղեկավարից, Ծրագրի գործառույթներով չնախատեսված աշխատել են թվով **42** աշխատողներ, որոնց համար Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել է **1,598.2** հազ. դրամ (357.1 + 597.1 + 644.0): Միաժամանակ հարկ է նշել որ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ավել աշխատողներից (42-ից) թվով **23** աշխատողներ հանդիսացել են Կամզկերպության գլխամասի՝ տուն-ինտերնատի աշխատակիցներ և աշխատավարձը ստացել են նույնպես տուն-ինտերնատից:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է արձանագրել, որ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում **աշխատանքի ընդունված 19 աշխատակիցներ** (42 հաստիք – 23 հաստիք), Ծրագրի շրջանակներում գործառույթներ չունեին, քանի որ 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Մասնաճյուղում չեն խնամվել կորոնավիրուսային վարակով (COVID-19) շահառուներ: Միաժամանակ հարկ է նշել, որ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատանքի ընդունված 19 աշխատակիցներ ովքեր Ծրագրի շրջանակներում գործառույթներ չունեին, Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարված աշխատավարձը կազմել էր **1,598.2** հազ. դրամ:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 15

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի «Պայմանագրի առարկան» I. գլխի պահանջների մասով: Այսպես, 2020 թվականի հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատանքի ընդունված 19

աշխատակիցներ Ծրագրի շրջանակներում տվյալ ժամանակահատվածում գործառույթներ չունեին, և այդ ժամանակահատվածի համար Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարվել էր 1,598.2 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *անհամապատասխանության կապակցությամբ տեղեկացնում եմ, որ հուլիսից մինչև հոկտեմբեր ամիսը Աղավնաձոր մասնաճյուղում ապահովվել է միայն պահակային ծառայությունը: Սակայն հոկտեմբերի 10-ից հետո ելնելով պատերազմական վիճակից և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարի 17.10.2020 թվականի N179 Ա/1 հրամանի 1 և 3 կետերի պահանջները՝ ըստ անհրաժեշտության մասնաճյուղը սկսել ենք համալրել համապատասխան աշխատողներով, միաժամանակ պահպանելով COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումները:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված առարկությունները անընդունելի են, քանի որ հոկտեմբեր ամսվանից մասնաճյուղում ծառայություն է մատուցվել **Ծրագրով չնախատեսված** շահառուների համար, սակայն Ծրագրի ֆինանսական միջոցների հաշվին:*

*Վերոգրյալից բխում է, որ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին Մասնաճյուղում աշխատանքի ընդունված 19 աշխատակիցներ Ծրագրի շրջանակներում գործառույթներ չունեին և Ծրագրի ֆինանսական միջոցներից վճարված **1,598.2** հազ. դրամի աշխատավարձը իրավական տեսանկյունից հիմնավորված չէ, հետևաբար անհամապատասխանությունը առկա է:*

5.2.3[1].4 Հաստատուն ծախսերի՝ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 425100 ծածկագրով ներկայացված ծախսերի ուսումնասիրության արդյունքների մասին.

Համաձայն Պայմանագրի կից Հավելված 4-ով ներկայացված հաստատուն ծախսերի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 425100 ծածկագրով ներկայացված ծախսերի, ճշտված նախահաշվով նախատեսված **172.0** հազ. դրամի դիմաց բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը կազմել էր **172.0** հազ. դրամ: ՈՒսումնասիրության արդյունքում պարզվեց, որ առկա է «Մեծ ծիածան» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի հունիսի 16-ին դուրս գրված հարկային հաշիվ, համաձայն որի «Մեծ ծիածան» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել էր 678.7 հազ. դրամի թվով 10 ապրանքների անվանումներ, որոնցից մի մասը ձևակերպվել էր սույն տնտեսագիտական ծախսային հոդվածով՝ սակայն Կազմակերպության հաշվապահության կողմից այն հստակ չի նշվել: ՈՒսումնասիրությամբ պարզվեց, որ «Մեծ ծիածան» ՍՊԸ-ի մատակարարված ապրանքի ծախսը պետք է ձևակերպվեր **«Նյութեր (ապրանքներ)» 426000** ծածկագրի ծախսային հոդվածով, այլ ոչ թե

«Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)» 425000 ծածկագրի ծախսային հոդվածով:

5.3 «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջոցով 09.08.2021թ-ի դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված ՏԲ-ում ընդգրկված և Կազմակերպության աշխատակիցների տվյալների համադրման արդյունքում նույնականացված անձանց մասին.

09.08.2020թ-ի դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված ՏԲ-ում ընդգրկված անձանց տվյալների և Կազմակերպության աշխատակիցների տվյալների համադրման արդյունքում նույնականացված անձանց ուսումնասիրությամբ պարզվեց, որ թվով 10 աշխատակիցներ հանդիսանում են նաև այլ Կազմակերպությունների աշխատակիցներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **Ծրագրում ընդգրկված աշխատակիցները շուրջօրյա գտնվել են Մասնաճյուղի տարածքում**, ապա համատեղությամբ աշխատանքը կարելի է դասել բարձր ռիսկային: Ստորև բերվում են բարձր ռիսկային դեպքերի համադրման արդյունքները:

1. Լ. Գ-ի Գ-յանը Ծրագրում աշխատել է 20.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից (այսուհետ՝ Հիմնադրամ) ստացված տեղեկատվությանը Գ-յան Լ-են աշխատել է նաև ՀՀ ԱՍՀՆ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում որպես հերթապահ-բժիշկ:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀԿՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
4	Լ.	Գ-յան	Գ.	00841035	15.08.2018	12.04.2021	ՊՈԱԿ-1	հերթապահ-բժիշկ
4	Լ.	Գ-յան	Գ.	00009615	04.06.2020	16.06.2020	ինստիտուտ	
4	Լ.	Գ-յան	Գ.	01505486	20.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ-2	
4	Լ.	Գ-յան	Գ.	03006183	09.04.2021		ՓԲԸ	Գլխավոր տնօրեն՝

								առողջապահական կազմակերպության

2. Գ. Խ-ի Հ-յանը Ծրագրում աշխատել է 04.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Հ-յան Գ-են 2020 թվականի փետրվարի 17-ից աշխատել է «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ում որպես հավաքարար:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					Սկիզբ	վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
5	Գ.	Հ-յան	Խ.	01505486	04.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	
5	Գ.	Հ-յան	Խ.	02655115	17.02.2020		ՓԲԸ	հավաքարար

3. Ա. Ֆ-ի Ե-յանը Ծրագրում աշխատել է 21.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Ե-յան Ա-ը 2013 թվականի ապրիլի 2-ից աշխատել է ՀՀ ԱՍՀՆ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում որպես հրահանգիչ:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
10	Ա.	Ե-յան	Ֆ.	00841035	02.04.2013		ՊՈԱԿ-1	հրահանգիչ
10	Ա.	Ե-յան	Ֆ.	01505486	21.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ-2	

4. Վ. Ա. Մ-յանը Ծրագրում աշխատել է 02.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Մ-յան Վ-ը երկու կազմակերպություններում աշխատել էր տնօրենի պաշտոններում՝ 2007 թվականի օգոստոսի 28-ից «ԻՆՏԵԳՌՈՒՄ ԱԼՖԱ»-ում և 2013 թվականի հունվարի 10-ից «ԿԱՆԹԵՂ ԹՐԵՅԴ»-ում և 2014 թվականի օգոստոսի 1-ից ՀՀ ԱՍՀՆ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում որպես բժիշկ:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
11	Վ.	Մ-յան	Ա.	00093131	28.08.2007		ԻՆՏԵԳՌՈՒՄ ԱԼՖԱ	Տնօրեն՝ կազմակերպության
11	Վ.	Մ-յան	Ա.	02606655	10.01.2013		ՍՊԸ	Տնօրեն՝ կազմակերպության
11	Վ.	Մ-յան	Ա.	00841035	01.08.2014		ՊՈԱԿ-1	Բժիշկ
11	Վ.	Մ-յան	Ա.	01505486	02.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ-2	
11	Վ.	Մ-յան	Ա.	00211847	15.06.2021		ՍՊԸ	Բժիշկ

5. Ա. Հ-ի Ս-յանը Ծրագրում աշխատել է 04.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Ս-յան Ա. աշխատել է «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ում որպես հոսքագծի բանվորուհի:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
13	Ա.	Ս-յան	Հ.	03015321	01.02.2019	13.04.2020	ՍՊԸ	ադմինիստրատոր
13	Ա.	Ս-յան	Հ.	02226764	12.05.2020	19.06.2020	ՓԲԸ	հոսքագծի բանվորուհի
13	Ա.	Ս-յան	Հ.	01505486	04.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	
13	Ա.	Ս-յան	Հ.	03015321	18.07.2020		ՍՊԸ	ադմինիստրատոր

6. Տ. Ս-ի Ս-յանը Ծրագրում աշխատել է 04.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Ս-յան Տ-ը աշխատել է «ԹԵՂԵՆԻՍ ՌԵՍՏ»-ում որպես խոհարարի օգնական:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
18	Տ.	Ս-յան	Ս.	03024417	15.01.2020	06.08.2020	ՍՊԸ	Խոհարարի օգնական
18	Տ.	Ս-յան	Ս.	01505486	04.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	
18	Տ.	Ս-յան	Ս.	03547208	03.06.2021		ՍՊԸ-1	Խոհարարի օգնական

7. Ս. Դ-ի Բ-յանը Ծրագրում աշխատել է 15.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Բ-յան Ս. աշխատել է «ՌՈՅԱԼ ՍԻԳՆԱՉՐ»-ում որպես մեքենայացված խաղերի օպերատոր:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	2	3	4	5	6	7	8	9
22	Ս.	Բ-յան	Դ.	00203032	16.07.2019		ՍՊԸ	մեքենայացված խաղերի օպերատոր
22	Ս.	Բ-յան	Դ.	01505486	15.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	
22	Ս.	Բ-յան	Դ.	03015321	25.08.2020	28.08.2020	ՍՊԸ-1	մատուցող.

8. Ա. Մ-ի Մ-յանը Ծրագրում աշխատել է 15.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Մ-յան Ա. 2008 թվականի հոկտեմբերի 10-ից աշխատել է «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ում որպես բուժքույր՝ մանկաբարձ, միջին որակավորման:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	2	3	4	5	6	7	8	9
23	Ա.	Մ-յան	Մ.	03017721	10.10.2008		ՓԲԸ	Բուժքույր՝ մանկաբարձ, միջին որակավորման
23	Ա.	Մ-յան	Մ.	01505486	02.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	

23	Ա.	Մ-յան	Մ.	03014302	04.09.2020	26.09.2020	ՊՈԱԿ-1	բուժքույր
23	Ա.	Մ-յան	Մ.	03014302	22.06.2021		ՊՈԱԿ-1	բուժքույր
23	Ա.	Մ-յան	Մ.	00473142	22.06.2021	04.07.2021	ՊՈԱԿ-2	

9. Ս. Ս-ի Ա-յանը Ծրագրում աշխատել է 02.06.2020թ-ից առ այսօր: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Ա-ան Ս. 2014 թվականի ապրիլի 15-ից աշխատել է «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամում որպես վարիչ՝ բաժնի:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					սկիզբ	Վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
26	Ս.	Ա-յան	Ս.	02527624	15.04.2014		հիմնադրամ	Վարիչ՝ բաժնի
26	Ս.	Ա-յան	Ս.	01505486	02.06.2020	08.02.2021	ՊՈԱԿ	
26	Ս.	Ա-յան	Ս.	01505486	08.02.2021		ՊՈԱԿ-1	Պարետ

10. Մ. Վ. Ա-յանը Ծրագրում աշխատել է 24.06.2020թ-ից մինչև 01.07.2020թ-ը: Միաժամանակ, համաձայն Հիմնադրամից ստացված տեղեկատվությանը Ա-յան Մ.՝ 2008 թվականի նոյեմբերի 11-ից աշխատել է «ՎԱՐԴԵՆԻՍԻ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ում որպես բուժքույր և 01.02.2016թ-ից մինչև 03.07.2020թ-ը աշխատել է «ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ում որպես սանիտար:

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 09.08.2021թ. ստացված ՏՀ-ում առկա 2020 թվականների համար առկա տվյալներ				
				ՀՎՀՀ	Աշխատանքային պայմանագրի		Գործատու	Պաշտոն
					Սկիզբ	վերջ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
32	Մ.	Ա-յան	Վ.	08800705	01.11.2008		ՊՈԱԿ	Բուժ քույր
32	Մ.	Ա-յան	Վ.	00009357	01.02.2016	03.07.2020	ՊՈԱԿ-1	Սանիտար
32	Մ.	Ա-յան	Վ.	01505486	24.06.2020	01.07.2020	ՊՈԱԿ	

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Կազմակերպության տնօրեն Ա. Մելքոնյան)՝ *կետում նշված անհամապատասխանության կապակցությամբ տեղեկացնում ենք, որ ծրագրում ընդգրկված 10 աշխատակիցներ միաժամանակ աշխատել են նաև այլ գործատուի մոտ՝ դա վերաբերվում է հունիս ամսին աշխատած աշխատակիցներին, որի կապակցութֆյամբ բացատրությունը կներկայացվի տվյալ ժամանակահատվածի պատասխանատուի կողմից: Միևնույն ժամանակ նշենք, որ պատասխանատուի կողմից իր ստորագրությամբ ներկայացվել է նշված աշխատակիցների կողմից իրականացված ծառայությունների ակտը, ինչը հավաստում է, որ տվյալ աշխատակիցները մասնաճյուղում իրականացրել են իրենց վերապահված աշխատանքները (ծառայությունները):*

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը անընդունելի է, քանի որ Կազմակերպության կողմից չեն ներկայացվել փաստը հավաստող (առ այն որ նշված գործատուների մոտ չեն աշխատել) փաստաթղթեր:*

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը (Ծրագրի պատասխանատու Հ. Բալասանյան)՝ *Աշխատանքները կազմակերպվել են շուրջօրյա՝ ոչ պակաս, քան յոթ օր տևողությամբ, հազվագյուտ դեպքում՝ երեք կամ մեկօրյա տևողությամբ, երբ նոր աշահատակիցը չի կարողացել համակերպվել ծանրաբեռնվածությանը կամ պահանջներին: Վստահաբար, աշխատակիցներն այլ կազմակերպություններում չէին կարող գործունեություն ծավալել, քանի որ գտնվում էին Աղավնածորի մասնաճյուղում* ***շուրջօրյա:***

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝ *Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը անընդունելի է, քանի որ Կազմակերպության կողմից չեն ներկայացվել փաստը հավաստող (առ այն որ նշված գործատուների մոտ չեն աշխատել) փաստաթղթեր:*

Արման Սարգսյան ——————— « » 2021թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի
1-ին վարչության պետ

Հայաստանի Հանրապետություն

6.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը

- Քննարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2020 թվականին իրականացված՝ Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի նկատմամբ կատարված հաշվեքննության արդյունքներով արձանագրված մի շարք անհամապատասխանությունների ծագման պատճառ նշված «արտակարգ/անկանխատեսելի» իրավիճակով առաջացած հետևանքների հիմնավոր լինելու հարցը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

- Միջոցներ ձեռնարկել հաշվեքննության արդյունքում արձանագրված՝ համապատասխան իրավական ակտերով ու պայմանագրերով չնախատեսված ծախսերի հետևանքով հատկացված ֆինանսական միջոցների ՀՀ պետական բյուջե հետ վերադարձման ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել հաշվեքննության արդյունքում արձանագրված՝ համապատասխան պայմանագրերով նախատեսված, սակայն կատարման փաստը հավաստող թերի հիմնավորում ունեցող ծախսերի փաստաթղթային հիմնավորման ուղղությամբ:

- Այսուհետ իրականացվող նմանատիպ բոլոր ծրագրերի կատարման նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանել հաշվի առնելով արձանագրված բոլոր բացերը, որոնք առաջանում են արտակարգ/անկանխատեսելի իրավիճակներով պայմանավորված՝ անհրաժեշտության դեպքում վերանայելով հսկողական ողջ համակարգը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ սույն ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: